

ՀԱՆԳԻՍ ՀՈԳԻՈՅ

ՏՔՔ. ԱՆՊԱ ՊԱՍԻԼԻՈՍ

Ղպտոց Երուսաղէմի Արքեպիսկոպոս

13 Հոկտեմբեր, Կիրակի առաւօտ, Ամմանի մէջ վախճանեցաւ Ս. քաղաքիս Ղպտի փոքրաթիւ համայնքիմ Հոգեւոր Պետը՝ ՏՔՔ. Ամպա Պասիլիոս Արքեպիսկոպոսը:

Համգուցեալը, 68 տարեկան, քամի մը շաբաթներ առաջ մեկնած էր Յորդանան, համայնքայիմ գործերով: Հոմ էր որ ըմդումնց գլխու կաթուածը որմէ ետք մնաց հոգեւարքի մէջ եւ ուշակորոյս:

Ծնած 1923-իմ Գահիրէի արուարձաններէմ մեկում մէջ, երկրորդական ուսման աւարտիմ մեկնած է Աթէք, ուր ստացած է Աստուածաբանութեան Տոքթորայի տիտղոսը:

1959-իմ, տակաւիմ երիտասարդ, Եպիսկոպոս ձեռնադրուած է Քիրիլլոս (Կիւրեղ) Պատրիարքէմ եւ մոյմ տարւոյ 23 Յուլիսիմ ժամանած Երուսաղէմ, իբրեւ Պետ եւ հովիւ՝ տեղւոյս Ղպտի գաղութիմ, պաշտօն մը՝ զոր վարեց միմչեւ իր մահը, 32 երկար տարիներ, ըլլալով հմագոյմը քաղաքիս համայնքներու հոգեւոր պետերում:

Ճարտար քարոզիչ եւ գրող, համգուցեալը իր ետիմ կը թողու կրթական եւ կրօնական բեղում գործումեւութիւմ մը, որ այսպէս կ'ըմդիատուի ամծամանակ:

Իր փափաքիմ համաձայն, մարմինը կը փոխադրուի Գահիրէ ուր կը թաղուի իր ըմտանկան զամբարանիմ մէջ:

Իր հոգւոյմ համար, 20 Հոկտ.ի Կիրակիմ Ղպտոց մայրավանքի Ս. Ամտոմ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ համգստեան համդիսաւոր պաշտօն, որում մերկայ եղան Հոգշ. Ամուշաւամ Ծ. Վրդ. Զղջանեան եւ Հոգշ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

«Սինոմ», յամում Ամեմ. Ս. Պատրիարք Հօր, իր ցաւակցութիւմը կը բերէ Ղպտի քոյր համայնքիմ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԵԱՆ
(1938-1991)

14 Հոկտեմբեր, Երկուշաբթի առաւօտեան վաղ ժամերում, ի տէր հանգեաւ Ս. Աթոռոյս պաշտօնեաներէմ Յարութիւմ Զաքարեանը, կարճատեւ ամհամգստութեմէ մը ետք:

Ծնած Երուսաղէմ՝ 1938-իմ, համգուցեալը 1957-էմ սկսեալ պաշտօնավարած է Ս. Աթոռոյս Դիւանատան մէջ իբրեւ սպասարկող: Յետագայիմ Ուրար ստանալով, ծառայած է մախ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ իբրեւ լուսարար, եւ վերջիմ տարիներում՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածմայ եւ Բէթղէհէմի Ս. Ծմմդեան Տաճարներում մէջ:

Պատրաստակամ ու ծառայասէր, Յարութը, իմչպէս ճանչցուած էր շատերէմ, եղած էր միշտ հոմ՝ ուր կարիքը զգացուած էր դպրի կամ բուրվառակրի, հակառակ յաճախ իր ֆիզիքական տկարութիւմներում:

Յուդարկաւորութիւմը կատարուեցաւ մոյմ օրը, երեկոյեան ժամերգութեան աւարտիմ, Ս. Էջմիածին մատրան մէջ, մախագահութեամբ Ս. Հրեշտակապետաց Վանուց Տեսուչ Գերշ. Ս. Սեւան Եպս. Ղարիպեանի, որ կարճ բայց զգացուած դամբանական մը խօսեցաւ: Ներկայ էր Ս. Յակոբեանց Միաբանութիւմը գրեթէ ամբողջութեամբ:

Իսկ Ս. Փրկչի գերեզմանատան մէջ, ուր ամփոփուեցաւ Ս. Աթոռոյս վաղամեղ պաշտօնեայիմ մարմինը, խօսեցաւ Դիւանատան պաշտօնեայ Սաղիմահայ Մուխթար Ուրարակիր Տիար Կարապետ Յակոբեանը:

Համգուցեալը եղբայրն էր դարձեալ վաղամեղ Ս. Յարութեան Տաճարի Լուսարար ՏՔՔ. Վահէ Զաքարեանի: Ան իր ետիմ կը թողու իր քոյրը՝ Նուարդ: